

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ  
Խ. ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ  
ՄԱՆԿԱԿԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՄՈՒՐԱԴՅԱՆ ՎԱՐԴԱՆ ԱՇՈՏԻ

ՍՈՎոՐՈՂՆԵՐԻ ՈԱԶՄԱՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ  
ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ ՈՒՂԻՆԵՐՆ ՈՒ  
ՄԻՋՈՑՆԵՐԸ

ԺԳ.00.01-«Մանկավարժության տեսություն և պատմություն»  
մասնագիտությանք մանկավարժական գիտությունների թեկնածուի  
գիտական աստիճանի հայցման  
ատենախոսության

Ս Ե Ղ Մ Ա Գ Ի Ր

ԵՐԵՎԱՆ - 2014

Ատենախոսության թեման հաստատվել է Գյումրու Ս. Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտում:

Գիտական ղեկավար՝

Մանկավարժական գիտությունների դոկտոր՝ **Վ. Ֆ. Գրիգորյան**

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ Մանկավարժական գիտությունների դոկտոր՝ **Ի. Կ. Կարապետյան**

Մանկավարժական գիտությունների թեկնածու՝ **Հ. Վ. Թադևոսյան**

Առաջատար

կազմակերպություն՝

**Ֆիզիկական կուլտուրայի հայկական**

**պետական ինստիտուտ**

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2014թ. հոկտեմբերի 23-ին ժամը 12:00-ին Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում գործող << ԲՈՀ-ի մանկավարժության 020 մասնագիտական խորհրդի նիստում:


Հասցեն՝ 0010, Երևան, Տիգրան Մեծի 17:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2014թ.սեպտեմբերի 23-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար,

մանկավարժական գիտությունների թեկնածու՝



**Ա. Վ. Սպազյան**

## ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

**Հետագոտության արդիականությունը:** Հայրենասիրության ժամանակակից ընկալումը բնութագրվում է ոչ միօրինակությամբ: Շատ բանում այն բացատրվում է տվյալ երևոյթի բարդ բնույթով, նրա բովանդակության բազմակողմանիությամբ և արտահայտման ձևերի բազմազանությամբ: Դա պայմանավորված է առաջին հերթին Հայաստանի ռազմաքաղաքական իրավիճակով, աշխարհաքաղաքական դիրքով, Ադրբեյջանի և Թուրքիայի հետ հարաբերությունների բնույթով, շուկայական հարաբերություններով: Բացի դրանից, հայրենասիրության խնդիրը դիտարկվում է տարբեր հետազոտողների կողմից տարբեր պատճական, սոցիալ-տնտեսական և քաղաքական պայմաններում, ինչպես նաև կախված անհատական քաղաքացիական դիրքորոշումից, սեփական հայրենիքի նկատմամբ վերաբերմունքից: «Հայրենասիրություն» տերմինն օգտագործվում է ոչ միայն գիտահետազոտական գրականության մեջ, այլ նաև քաղաքագետների և քաղաքական կուսակցությունների ելույթներում, բանավճերում, հոդվածներում, նախընտրական ծրագրերում և այլն: Հայրենասիրական և ռազմահայրենասիրական դաստիարակության հիմնախնդիրներն այսօր նոր լուծումներ, նոր նոտեցումներ են պահանջում:

Ժամանակակից հասարակության մեջ նկատվում է ազգային արժեքների, մշակույթի, հայրենասիրական գաղափարների նկատմամբ անտարբերություն, դրանց անտեսում, քաղաքացիական դիրքորոշման պակաս: Ուստի կարևոր է, թե ինչպիսի սոցիալ-մշակութային քաղաքականություն է վարում պետությունը, ինչպիսին է կրթական համակարգի բովանդակությունը, քանի որ դրանով է պայմանավորված ժամանակակից աշխարհի մարտահավաքներին ոինակայելու հաջողությունը, ազգային վերածնունդը: Հայրենասիրական դաստիարակության ուղղությամբ հանրակրթական դպրոցների աշխատանքի տեսության ու պրակտիկայի վերլուծությունը թույլ տվեց վեր հանել հակասություններ ժամանակակից պայմաններում սովորողների հայրենասիրական դաստիարակության արդիականության, հրատապության, հայրենիքի պաշտպանության համար պատրաստության անհրաժեշտության և մանկավարժական գիտության տեսության մեջ ու պրակտիկայում այդ հիմնախնդիրի ոչ բավարար մշակվածության միջև: Հակասություններ կան նաև հայրենասերի և քաղաքացու անձի ձևավորման նկատմամբ պետական պատվերի և դպրոցում ուսուցման, դաստիարակության պայմաններում իր քաղաքացիական դիրքորոշման դրսերման հնարավորության բացակայության և հանրակրթական դպրոցում սովորողների նպատակաւուղված հայրենասիրական դաստիարակության գործընթացի իրականացման օբյեկտիվ անհրաժեշտության, կյանքում այն իրագործելու համար համապատասխան մանկավարժական պայմանների բացակայության միջև: Նշված հակասություններն ել պայմանավորում են հետազոտության հիմնախնդիրը: Ինչպիսին են ժամանակակից ավագ դպրոցականների ռազմահայրենասիրական դաստիարակության մանկավարժական

պայմանների ամբողջությունը, համակարգը, բովանդակությունը, իրականացման մեթոդներն ու միջոցները, դրանց կատարելագործման հնարավորությունները, ինչ սխալներ, ինչ բացթողումներ կան այդ համակարգում, ինչպես կարելի է դրանք հալթահարել Այս հիմնախնդիրներն ել հիմք դարձան ատենախոսության թեմայի սահմանանան համար:

**Հետազոտության օբյեկտը** սովորողների ռազմահայրենափրական դաստիարակության գործընթացն է ժամանակակից ավագ դպրոցում:

**Հետազոտության առարկան** սովորողների ռազմահայրենափրական դաստիարակության կատարելագործման արդյունավետ ուղիների ու միջոցների համար:

**Հետազոտության նպատակն** է մշակել և տեսականորեն հիմնավորել ավագ դպրոցում սովորողների ռազմահայրենափրական դաստիարակության գործընթացի կատարելագործման արդյունավետ ուղիների ու միջոցների համար:

### **Հետազոտության խնդիրներն են.**

1. Վերլուծել դպրոցականների ռազմահայրենափրական դաստիարակության բովանդակությունն ու նրա բաղադրիչները ժամանակակից ավագ դպրոցի ամբողջական ուսումնականական գործընթացում,

2. Ուսումնասիրել ռազմահայրենափրական դաստիարակության տեսական մեթոդաբանական հիմունքները,

3. Բացահայտել ռազմահայրենափրական դաստիարակության համակարգի, առանձին մոդելների գործառնությունը ժամանակակից ավագ դպրոցում,

4. Մշակել և գիտափորձով հիմնավորել ժամանակակից ավագ դպրոցում ռազմահայրենափրական դաստիարակության կատարելագործման մանկավարժական ուղիների ու միջոցների համար,

5. Վիրուժարական ճանապարհով հիմնավորել արդի ավագ դպրոցում ռազմահայրենափրական դաստիարակության կատարելագործման մեր կողմից առաջադրված մանկավարժական ուղիների ու միջոցների գործառնությունը,

6. Ստեղծել դպրոցականների ռազմահայրենափրական դաստիարակության և նախագործակոչային պատրաստության համակարգված ծրագիր:

**Հետազոտության գիտական վարկածը.** Սովորողների ռազմահայրենափրական դաստիարակության գործընթացն ավելի արդյունավետ կլինի, եթե.

1. Դպրոցականների ռազմահայրենափրական դաստիարակությունը դիտարկվի որպես ամբողջական մանկավարժական գործընթացի բաղադրիչ,

2. Ուսումնասիրվեն ռազմահայրենափրական դաստիարակության գիտառեսական հիմունքները,

3. Բացահայտվի ռազմահայրենափրական դաստիարակության համակարգի, նրա առանձին մոդելների գործառնությունը ժամանակակից ավագ դպրոցում,

4. Հիմնավորվի << Երիտասարդ սերնդի հայրենափրական

դաստիարակության կազմակերպման ու իրականացման հայեցակարգի ստեղծման հրատապությունը,

5. առաջադրվեն ժամանակակից ավագ դպրոցում ռազմահայրենասիրական դաստիարակության կատարելագործման նանկավարժական ուղիներ ու միջոցներ,

6. փորձարարական ճանապարհով իիմնավորվի արդի ավագ դպրոցում ռազմահայրենասիրական դաստիարակության կատարելագործման մեր կողմից առաջադրված նանկավարժական ուղիների ու միջոցների գործառությունը:

**Հետազոտության մեթոդաբանական հիմքերը:** Հետազոտության համար մեթոդաբանական և տեսական իիմքեր են ծառայել Կ.Դ.Ուշինսկու, Վ.Ա.Սոլյոնմիխնսկու, Ա.Վ.Սարգսյանի, Հ.Պ.Անդրեասյանի, Հ.Վ.Թաղկուսյանի, Վ.Կ.Լևաչովի, Ա.Հ.Հարությունյանի, Վ.Բ.Յարամիշյանի, Գ.Նժդեհի, Ա.Հ.Պողոսյանի, Ա.Վ.Բարանովի, Վ.Ա.Բելոգանովի, Ե.Վ.Բեսպալովյայի, Ա.Ն.Վիշչիկովի, Ե.Ն.Գերմոնգենովյայի, Մ.Վ.Ժիրկովյայի, Ս.Ե.Սատուշկինի, Վ.Մ.Մետելկինայի, Ե.Ա.Բոնդարենկոյի, Օ.Գ.Պետրովյայի, Ի.Վ.Կրասևյայի, Ի.Ա.Պուչարյովյայի, Վ.Ե.Ռուսկինի, Ի.Ֆ.Խառամովի, Լ.Ն.Շառախովյայի տեսություններու ու հայացքները, ինչպես նաև ՀՀ ազգային անվտանգության ռազմավարությունը, ՀՀ Պատմական հայեցակարգը, ՀՀ ռազմական դոկտորինը:

**Հետազոտության մեթոդները:** Հետազոտությունն իրականացնելիս օգտագործել ենք դիտման, գրույցի, հարցաթերթերի մեթոդները: Հետազոտությունը կատարելիս օգտագործել ենք.

▪ պատմագրական /իիմնախմնդրին առնչվող փիլիսոփայական, հոգեբանամնկավարժական գրականության վերլուծություն/, դպրոցականների ռազմահայրենասիրական դաստիարակության ոլորտում կուտակված համաշխարհային փորձի համենատական-նանկավարժական վերլուծություն,

▪ դիտում, հարցաթերթ, գրույց, հարցագրույց, փորձագիտական գնահատում, գործունեության արդյունքների վերլուծություն:

**Հետազոտության բազա** են հանդիսացել Գյումրու թիվ 42, 29, 30, 6 դպրոցները, 1-ին վարժարանը, Քերիքի, Մայիսյանի, Վահրամաբերդի միջնակարգ դպրոցները:

**Հետազոտության իրականացման փուլերը.** Հետազոտությունը կատարվել է 2009-2012թթ. ժամանակահատվածում և ներառում է տրամաբանորեն կապակցված հետևյալ երեք փուլերը.

1. **Պրոբեմային-որոնողական փուլ (2009-2010թթ.):** Այս փուլի հիմնական նպատակը ենք է հետազոտության սկզբնական չափանիշների հստակեցում՝ նպատակի, խնդիրների ձևակերպում, տեղայնացում, տեսական և փորձարարական նյութի և հետազոտության մեթոդների նկատմամբ մեթոդաբանական նույնացումների հիմնավորում, ավագ դպրոցականների ռազմահայրենասիրական դաստիարակության հիմնախմնդրին վերաբերող գրականության ուսումնասիրություն: Արդյունքը հետազոտության հիմնախմնդրի, նրա հիմնական ուղղությունների որոշարկումն էր, հիմնական հասկացությունների համակարգի կառուցումը,

Վարկածի ձևակերպումը, հետազոտության բազայի հստակեցումը:

**2. Հաճակագոման փուլ (2010-2011թթ.):** Ուսումնասիրվել և վերլուծվել են հանրակրության ոլորտի, մասնավորապես դպրոցի զարգացման ժամանակակից հիմնական միտումները, իրականացվող բարեփոխումները, նախազորակոչքային տարիքի դպրոցականների ռազմահայրենասիրական դաստիարակության գիտատեսական հիմքերը, գործնականում դրանց կիրառման և արդյունավետության մակարդակները: Այս փուլում մշակվել և տեսականորեն համակարգվել են ժամանակակից ավագ դպրոցում սովորողների ռազմահայրենասիրական դաստիարակության հիմնական ուղղությունները, մեթոդները, կազմվել է գրույցի թեմատիկա, հարցարերթեր, դրանցով կատարվել են հետազոտական-փորձարարական աշխատանքներ:

**3. Արդյունքների ընդհանրացման փուլ (2011-2012թթ.):** Այս փուլում հաճակարգվել, ընդհանրացվել և գնահատվել են կատարված տեսական և փորձարարական աշխատանքների արդյունքները, ստուգվել են առաջադրված դրույթները: Արդյունքները ընդհանրացվել են գիտական հրապարակումներում, գիտական գեկուցումների տեսքով ներկայացվել հանրապետական և միջբնիկական գիտաժողովներում, ավարտական տեսքի է բերվել ատենախոսության գիտական ձևակերպումը:

Թեևնաժողական ատենախոսության հիմնական դրույթները քննարկվել են Գյումրիի Ս.Նալբանդյանի անվան պետական մանկավարժական հնասիտուտի մանկավարժության ամբիոնի նհստերում:

#### **Հետազոտության գիտական նորույթը:**

• Մերկայացվել է սովորողների ռազմահայրենասիրական դաստիարակության ամբողջական համակարգ, հստակեցվել են ժամանակակից նպատակը, խնդիրները, սկզբունքներն ու մոտեցումները, առաջարկվել է զարգացման ծրագիր:

• Բացահայտվել և տեղայնացվել է ռազմահայրենասիրական դաստիարակության համակարգի առանձին մոդելների գործառնությունը ժամանակակից դպրոցում հայ-ադրբեջանական սահմանային լարվածության, հակառակորդի կողմից դիվերսիոն-հետախուզական ակտիվ գործողությունների, հավանական պատերազմի սանձազերծնան պայմանների հաշվառմանը:

• Մշակվել և հարցումների միջոցով հիմնավորվել են ժամանակակից դպրոցում ռազմահայրենասիրական դաստիարակության գործընթացի կատարելագործման նպատակով մեր կողմից առաջադրված մանկավարժական ուղիներն ու ռազմավարությունը:

• Ավագ դպրոցականների քաղաքացիական և հայրենասիրական դաստիարակությունը դիտարկվել է պետական երիտասարդական քաղաքականության համակարգում:

**Հետազոտության տեսական նշանակությունը** պայմանավորված է մանկավարժության ոլորտում դպրոցականների հայրենասիրական, ռազմահայրենասիրական դաստիարակության ժամանակակից հիմնախնդիրներին վերաբերող գիտատեսական ուսումնասիրությունների հարստացմանք, ժամանակակից կրթական բարեփոխումների պայմաններում դպրոցականների ռազմահայրենասիրական դաստիարակության առանձնահատկու-

թյունների բացահայտմամբ և այդ գործընթացի կատարելագործման ուղիների և միջոցների գիտատեսական հիմնավորմամբ:

**Հետազոտության գործնական նշանակությունը** նրանում է, որ դպրոցականների ռազմահայրենասիրական դաստիարակության և նախազորության մշակումից մշակված ծրագիրը, մեթոդական առաջարկությունները կնպաստեն ժամանակակից դպրոցում ռազմահայրենասիրական դաստիարակության գործընթացի կատարելագործմանը, այդ ոլորտում առկա թիրախների բացահայտմանը, դրանց հաղթահարման մանկավարժական ուղիների մշակմանը, ինչպես նաև կնպաստեն գինվորական ծառայությանը՝ նախազորակոչչային տարիքի պատասխնների պատրաստվածության մակարդակի բարձրացմանը:

**Պաշտպանության են ներկայացվում հետևյալ դրույթները.**

1. Ժամանակակից դպրոցում ռազմահայրենասիրական դաստիարակության գործընթացի արդյունավետությունը պայմանավորված է ռազմահայրենասիրական դաստիարակության գիտատեսական հիմունքների մշակմամբ:

2. Սովորողների ռազմահայրենասիրական դաստիարակությունն անհրաժեշտ է դիտարկել որպես ավագ դպրոցում ամբողջական մանկավարժական գործընթացի բաղադրիչ:

3. Ռազմահայրենասիրական դաստիարակության համակարգի, նրա առանձին մոդելների արդյունավետ գործառնությունը ժամանակակից ավագ դպրոցում հնարավոր է ազգային բանակի ավանդույթների և էթոնմշակութային միջավայրի առանձնահատկությունների հաշվառման պայմաններում:

4. «Հերիտասարդների հայրենասիրական դաստիարակության կազմակերպման ու իրականացման հայեցակարգի ստեղծման հրատապությունը պայմանավորված է «Հաշխարհաքաղաքական ներկա իրավիճակով, հանրակրթության ոլորտում, ռազմահայրենասիրական դաստիարակության ոլորտում առկա խնդիրներով, նախազորակոչչային տարիքի պատասխնների ու երիտասարդների հոգեբանական պատրաստության խնդիրներով»:

5. Արդի դպրոցում ռազմահայրենասիրական դաստիարակության կատարելագործումը հնարավոր է մեր կողմից առաջադրված մանկավարժական ուղիների ու միջոցների արդյունավետ գործառնությամբ:

**Հետազոտության արդյունքների հավաստիությունն ու հիմնավորվածությունը** երաշխավորվում են սովորողների ռազմահայրենասիրական դաստիարակության վերաբերյալ հոգեբանանանկավարժական, գիտական գործականության, մշակված հայեցակարգերի համարի վերլուծությամբ, մասնագիտական փորձի համակողմանի ուսումնասիրությամբ և արված ընդհանրացումներով, հետազոտության տեսական ելակետային հիմունքների հիմնավորված բնույթով, հետազոտության հիմնախնդրին, նպատակին ու խնդիրներին համարժեք տեսական և էմպիրիկ մեթոդների համալիր կիրառմամբ, իրականացված մշտափոխակնան ընթացքում ստացված տվյալների նպատակառուղղված վերլուծությամբ, ընդհանրացմամբ, հետազոտության հիմնական արդյունքների փորձաքննությամբ, եզրակացությունների հիմնավորմամբ, տվյալների մշակման ժամանակակից

մեթոդների կիրաօժանդակ:

**Հետազոտության փորձաքննությունն իրականացվել է Գյումրու Ս. Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտի մանկավարժության ամբիոնի նիստերում, հրատարակված գիտական հոդվածներում, հետազոտության բազա հանդիսացած ուսումնական հաստատություններում:**

**Աստեղախոսության կառուցվածքը:** Հետազոտությունը կազմված է բովանդակությունից, ներածությունից, երկու գլուխներից, եզրակացություններից, օգտագործած գրականության ցանկից, հավելվածներից: Ընդհանուր ծավալն է 145 համակարգչային էջ՝ առանց հավելվածների:

## ԱՏԵՆԱԱՆՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՇԱԿՈՒԹՅՈՒՆԸ

**Ներածության մեջ հիմնավորվել է հիմնախնդրի հրատապությունը, բացահայտվել է նրա մշակվածության աստիճանը, որոշվել են նպատակը, հետազոտության օբյեկտը, արարկան, խնդիրները, ձևակերպվել է աշխատանքային վարկածը: Ներկայացվել են հետազոտության մեթոդաբանական աղբյուրները, մեթոդիկան, նորույթը, տեսական և կիրառական նշանակությունը, պաշտպանության ներկայացվող դրույթները, ատեղախոսության փորձաքննությունն ու կառուցվածքը:**

**Աստեղախոսության առաջին «ԱՎԱԳ ԴՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ՈՎԱԶԱՎԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ՂԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ» խորագրով գլուխը բարկացած է չորս ենթագլխից, որոնցում դիտարկված են հայեցակարգային մոտեցումների վերլուծությունը, ավագ դպրոցականների ռազմահայրենասիրական դաստիարակության բովանդակությունը, նպատակը, խնդիրները, հիմնական սկզբունքներն ու ուղղությունները, ռազմահայրենասիրական դաստիարակության համակարգը հանրակրթական դպրոցում և ժամանակակից մոդելները, ինչպես նաև երիտասարդների քաղաքացիական և հայրենասիրական դաստիարակությունը պետական երիտասարդական քաղաքականության համակարգությունը: << քաղաքացիական և հայրենասիրական դաստիարակության հայեցակարգի ստեղծման անհրաժեշտությունը:**

Հիմնավորվում է, որ հայրենասիրական դաստիարակությունը պետք է իրականացվի ստվորողների անհատական առանձնահատկությունների հաշվարնամամբ: Նրա նպատակները հասանելի են դաշնության ընտանիքի, դպրոցի, հասարակական կազմակերպությունների, ուժային գերատեսչությունների, տեղական ինքնակառավարման մարմինների, կրթության կառավարման մարմինների, երիտասարդական քաղաքականության հասարակական և պետական հանձնախնդերի, պատերազմի վետերանների համատեղ ջանքերի միջոցով:


**Աստեղախոսության երկրորդ՝ «ՈՎԱԶԱՎԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ՂԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆՆԵՐԻ ԼՈՒՇԱՆ ՈՒՂԻՆԵՐԻ ԵՎ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄԸ ՆԱԽԱԶՈՐԱԿՈՉԱՅԻՆ ՏԱՐԻՔԵՐՈՒՄ» խորագրով գլուխը բարկացած է մինյանց լրացնող երեք**

Ենթագլխից, որոնցում դիտարկված են ռազմահայրենասիրական դաստիարակության կազմակերպումն ու դեկավարումը ժամանակակից ավագ դպրոցում, ռազմահայրենասիրական դաստիարակության համակարգի արդյունավետության բարձրացնան հիմնական ուղղություններն ու պայմանները, նախազորակոչային տարիքի պատանիների ռազմահայրենասիրական դաստիարակության կատարելագործման ուղիների ու միջոցների փորձարարական հիմնավորումը:

Ուղարկած հայրենասիրական դաստիարակությունը բնութագրվում է հատուկ ուղղվածությամբ, հայրենիքին ծառայելու նկատմամբ յուրաքանչյուր քաղաքացու կողմից սեփական դերը և տեղը խորը գիտակցելով, զինծառայության պահանջները կատարելու նկատմամբ անհատական բարձր պատասխանատվությամբ և այլն: Հայրենասիրական դաստիարակությունը, հանդիսանալով ընդհանուր դաստիարակչական գործնարարի մի մասը, ուսումնական հաստատության համակարգված և նպատակառուղյամբ գործունեություն՝ կապված սովորողների մոտ բարձր հայրենասիրական գիտակցության, սեփական հայրենիքի նկատմամբ հավատարնության, ի շահ ծննդավայրի՝ պետական պարտքը և սահմանադրական պարտականությունները կատարելու պատրաստականության, հայրենիքի նկատմամբ հպատակության ձևավորման հետ: Հարցումների ընթացքում փորձեցինք պարզել, թե արդյոք հպատակում են դպրոցականները մեր հայրենիքով (գծանկար 1):

#### Գծանկար 1.

#### Դպրոցականների վերաբերմունքը հայրենիքի նկատմամբ




Գծանկարից երևում է, որ մեծ տոկոս են կազմում բացասական պատասխանները, ինչպես նաև այն դպրոցականները, ովքեր դեռևս կողմնորոշված չեն հայրենիքի հանդեպ իրենց հույզերում, զգացնունքներում:

Հանրակրթական դպրոցներն ահրելի անելիքներ ունեն ռազմահայրենասիրական դաստիարակության ուղղությամբ: Դրանցից ամենահիմնականը ռազմագիտության, ֆիզկուլտուրայի, պատմության, աշխարհագրության և գրականության դասերին մեր խնդրու առարկայի առումով նպատակառուղյամբ գործունեություն ծավալելու է: Այստեղ հատկապես կարևորներ նախնական զինվորական պատրաստության դերն այդ գործում:


Իսկ չէ՞ որ ռազմահարենասիրական դաստիարակության նպատակը միայն ռազմագիտական գիտելիքներ հաղորդելը չէ: Այն այսօր նպատակ ունի լուծելու հրատապ դարձած մի խնդիր ևս՝ պատանիներին հոգեբանորեն պատրաստել զինվորական ծառայության: Եթե չի լուծվում այս խնդիրը, ապա դժվարանում է զինծառայության պայմաններին նորակոչիկների հարմարվելը: Մեր կողմից կատարված հետազոտությունների տվյալներն այս առումով բավական մտահոգիչ են: Այսպես, հարցված 131 դպրոցականների 42%-ը գտնում է, որ լրիվ պատրաստ է բանակում ծառայելու համար, 40%-ը՝ որոշ չափով, իսկ 18%-ը գտնում է, որ ընդհանրապես պատրաստ չէ (գծանկար 2):

**Գծանկար 2.**  
**Դպրոցականների՝ բանակում ծառայելու պատրաստվածության աստիճանը**



Ռազմագիտության դասերին, ռազմագիտական գիտելիքներ հաղորդելուն զուգահեռ, պետք է աշակերտներին տեկեատվություն տրվի զինվորական ծառայության վերաբերյալ, թե ինչ օբյեկտիվ հանգամանքներ կան բանակում, որոնց պետք է հարմարվի նորակոչիկը: Այսպես «Ի՞նչ է ռազմական հայրենասիրությունը» հարցին 131 դպրոցականներ տվել են հետևյալ պատասխանները (գծանկար 3):

Գծանկար 3.  
«Ի՞նչ է ռազմական հայրենասիրությունը» հարցման արդյունքները



Տրված պատճենաներից երկում է, որ ռազմահայրենասիրական դաստիարակության համակարգը << դպրոցներում կատարելագործման կարիք ունի:

Երիտասարդության ռազմահայրենասիրական դաստիարակությունը պետք է դարձնել պետական անխափան համակարգ: Բոլոր հանրակողական հիմնարկներում նապատակահարմար կլինի, որ գործեն պատամիների նախազորակոչային պատրաստության (ՊՆՊ) համալիրներ:

Լուրջ աշխատանքներ պետք է տարվեն պատանիների ու երիտասարդության ռազմահայրենասիրական ոգու դաստիարակության ուղղությամբ՝ քարոզություն անելով պետական խորհրդանիշների՝ որոշի, գիճանշանի, օրիներգի պաշտամունքի վերաբերյալ:

Այսպիսով, ռազմահայրենասիրական դաստիարակությունը ուղղի համեմատական կախվածության մեջ է պետական և ազգային քաղաքականությունից, պետության վերաբերմունքից ու գնահատականից: Թե՛ խաղաղ, թե՛ պատերազմական պայմաններում մատաղ սերունդը պետք է ունենա կուր զաղափարական հենք: Գաղափարական հենքը պատանու համար որոշակի է դարձնում սեփական առաքելությունը, առավել իմաստավորում իր հայրենիքի պաշտպանի, կարգավիճակը:

Հաշվի առնելով հետազոտությունների տվյալները՝ առաջարկում ենք ավագ դպրոցներում սովորողների ռազմահայրենասիրական դաստիարակության և նախազորակոչային պատրաստության միջոցառումների համակարգված ծրագիր:

**Ծրագրի նպատակը** ավագ դպրոցականների ռազմահայրենասիրական դաստիարակության և նախազորակոչային պատրաստության

խնդիրների լուծման մեթոդների, միջոցների ու ձևերի համակարգումն ու դրանց արդյունավետության բարձրացումն է:


### **Ծրագրի խնդիրներն են.**

- համակարգել ավագ դպրոցում ռազմահայրենասիրական դաստիարակության գործընթացը,
- հստակեցնել ավագ դպրոցում ռազմահայրենասիրական դաստիարակության գործընթացի մեթոդները, ձևերն ու միջոցները,
- բարձրացնել ավագ դպրոցականների ռազմահայրենասիրական դաստիարակության և նախազորակոչային պատրաստության խնդիրների լուծման մեթոդների, միջոցների ու ձևերի արդյունավետությունը:

Հիմնավորված է, որ ռազմահայրենասիրական դաստիարակության համակարգի գործառնությունը, արդյունավետությունը պայմանավորված է մանկավարժական գործընթացի սկզբունքների ձիւտ ընտրությամբ՝ նպատակատղվածություն, լավատեսական վերաբերմունք, գիտակցականություն և ակտիվություն, մանկավարժահոգեբանական առանձնահատկությունների հաշվառում, կղեկտիվ դաստիարակություն: Պատաճիների, երիտասարդների ռազմահայրենասիրական դաստիարակության խնդիրների շարքում վերջին տարիներին է ընդգրկվել մշտական պատրաստականության խնդիրը: Փաստորեն այն ենթադրությունը, որ հմացական, կամային, ֆիզիակական բարձր զարգացվածություն ունեցող պատաճիներն ու երիտասարդները միշտ պատրաստական են, իրականությանը չի համապատասխանում: Պատաճին ու երիտասարդը պետք է տեսնեն ու իրականում «շոշափեն» պետության և ազգի, ժողովորդի վերաբերմունքը, աջակցությունը, հայրենիքի պաշտպանության անհրաժեշտությունն իրենց համար դարձնեն համոզմունք: Բավականին մտահոգիչ են կողմից հարցման ենթարկված 131 դպրոցականների պատասխանները այն հարցին, թե արդյոք իրենք իրենց հայրենասեր են համարում: Այսպես, 21,3%-ը իրեն չի համարում հայրենասեր, 35,8%-ը մասամբ է իրեն հայրենասեր համարում, իսկ 13,7%-ը՝ դժվարացել է պատասխանել(գծանկար 4):

### **Գծանկար 4.**

**«Հայրենասեր համարո՞ւմ եք Ձեզ» հարցման արդյունքները**




Հիմնավորված է նաև, որ այսօր մեծ է տեղեկատվական, հոգեբանական պատերազմների դերը, իսկ մարտական գործողությունների ժամանակ հոգեբանական գործոնի դերը: Ստեղծվում են հոգեբանական բազմաբնույթ գենքեր, տեխնոլոգիաներ: Մեր հասարակության պայմաններում հոգեբանական գործոնով են պայմանավորված մեծ թվով աղանդավորական հոսանքների ձևավորումը, տարածումը, որոնցից շատերի գաղափարական հաճակարգի հանար անընդունելի են զինվորական ծառայությունն ու գենքի գործածումը, ինչն էլ հակառակորդի ձեռքին կդաշնա լրջագույն գենք հավանական պատերազմի դեպքում: Ռազմահայրենասիրական դաստիարակության արդյունավետությունը, հայրենիքի պաշտպանության պատրաստականության բարձր մակարդակը մեծապես պայմանավորված է նաև տնտեսական գործոնով:

Նախազորակոչային տարիի կամ նախածառաջողական շրջանում գտնվող հայ պատանիների դաստիարակության խնդիրների հաճակարգում ռազմահայրենասիրական դաստիարակությունն առաջնակարգ, առանձնահատուկ տեղ է զբաղեցնում՝ պայմանավորված Հայաստանի աշխարհաքաղաքական իրավիճակով, դիրքով:

Նախազորակոչային ռազմահայրենասիրական դաստիարակության հաճակարգն ունի իր բաղադրամատերը, խնդիրները. իմացական, ֆիզիկական, ռազմական, հոգեբանական: Ժամանակակից տեխնոլոգիաների, սպառազինությունների մուտքը բանակ նոր, ավելի բարձր պահանջներ են ներկայացնում զինծառաջողների, զինվորների իմացական որակներին, ինտելեկտուալ կարողություններին: Այսինքն, կարևորվում են զինակոչիկների կրթական մակարդակի, մտածողության ձևավորման խնդիրները: 2001-2004թ. զորակոչի արդյունքներով՝ ժամկետային ծառայության զինծառաջողների 0,25% -ն ունեցել է բարձրագույն կրթություն, 60,65%-ը՝ միջնակարգ և միջնակարգ մասնագիտական, 39,06%-ը՝ թերի միջնակարգ, 0,04%-ը՝ բացարձակ անգրագետ(գծանկար 5):

#### Գծանկար 5. 2001-2004թ. ժամկետային ծառայության մեկնած նորակոչիկների կրթվածության աստիճանը



Նշված արդյունքները ցույց են տալիս, որ այս իմացական-կրթական ներուժը բավարար չէ նորագոյն գենըն ու ռազմական տեխնիկան բարձր արդյունավետությամբ սպասարկելու համար: Նախազորակոչչային տարիքի պատանեների կրթական մակարդակն ուղղակիորեն կապված է ՀՀ հանրակրթության ոլորտում տիրող իրավիճակի, երկրում առկա սոցիալ-տնտեսական հիմնախնդիրների, հասարակության մեջ արժեհամակարգի ընդհանուր անկանության, օտարամոլության հետ: Մեծ է հանրակրթական դպրոցների դերը մատադ մերնի ռազմահայրենասիրական դաստիարակության գործում: Ուսումնական պլաններում ընդգրկված են առարկաներ՝ նախնական գինուրական պատրաստություն, գրականություն, պատմություն, աշխարհագրություն, երգ-երաժշտություն, որոնց բովանդակությունն անմիջականորեն կապված է դպրոցականների ռազմահայրենասիրական դաստիարակության խնդիրների լուծնան հետ: Մեծ ուշադրություն պետք է դարձնել նախնական գինուրական պատրաստությանը, որը շատ դեպքերում աշակերտների, նրանց ծնողների և հենց ուսուցիչների կողմից ընկալվում է որպես երկրորդական, ոչ պիտանի առարկա: Բավականին լուրջ խնդիր է մեր հանրապետությունում նաև համապատասխան գործիմաց մասնագետ-ուսուցիչների պահանջը, նրանց պատրաստման ու վերապատրաստման խնդիրները:

Պետական մակարդակով ռազմական սպառնալիքներին, ռազմական անվտանգության ապահովման հարցերին, գինված ուժերի ամրապնդման անհրաժեշտությանը, գինծառայության հեղինակության և մակարդակի բարձրացմանն ուղղված մեծ ջանքերը երեխն քիչ են լինում, քանի որ որոշ զանգվածներ, մամուլի ներկայացուցիչներ բանակում տեղի ունեցող ցանկացած միջադեպ, պատահար, ներկայացնում են որպես ողջ բանակին, բոլոր ստորաբաժաններին բնորոշ երևույթ, չափազանցնում են եղած բացասական երևույթների տարածվածության մասշտաբները (այդ թվում նաև նրա պայմանների և խթանների բարելավման ձևակարիով): Եվ այդ մեկնաբանությունները էականորեն, հիարկե, բացասական ուղղվածությամբ, ազդեցություն են ունեցում հասարակական կարծիքի, հատկապես այն ընտանիքների վրա, որոնք ունեն գորակոչչային տարիքի երեխաներ: Վերջիններիս մոտ ծևակորպում է որոշակի անտարբեր վերաբերմունք կարևոր սահմանադրական պարտականության՝ հայրենիքի պաշտպանության կատարման նկատմամբ:

Ինչպես վերականգնել համակարգը:

Բոլոր այս խնդիրների համախրդ պահանջում է հասարակության մեջ տեղի ունեցող փոփոխությունների, օքարգաման միտումների խորքային ուսումնասիրում և համակողմանի վերլուծություն: Մեծ նշանակություն է ձեռք բերում սկզբունքորեն նոր մոտեցումների որոնումը և նշակումը՝ ստեղծելու համար աճող սերդի հետ ռազմահայրենասիրական գործունեության որակապես նոր հիմքեր, որը հաշվի կառնի նրա արժեքների, պահանջմունքների և հետաքրքրությունների համակարգը:

Ստեղծված իրավիճակի արժատական փոփոխության համար պահանջվում է հայրենասիրական և ռազմահայրենասիրական դաստիարակության արդյունավետ համակարգի ստեղծում՝ ներառելով

կոնկրետ նպատակների, խնդիրների, երկարաժամկետ ռազմավարությունների սահմանումը: Այն պետք է իրականացվի սուբյեկտների առավելագույն քանակի ակտիվ մասնակցությամբ, հաճագրողակցությամբ, ռազմահայրենասիրական դաստիարակության կազմակերպման և իրականացման համար անհրաժեշտ պայմանների ստեղծմամբ, վերը նշված խնդիրների նպատակառուղղված և համայիր լուծմամբ: Ռազմահայրենասիրական դաստիարակության հաճակարգի ստեղծման սահմաններում անհրաժեշտ պայմանների ստեղծումը պահանջում է մեծ, անգամ օշանակալի միջոցների ներգրավում, այդ թվում նաև ֆինանսական: Գործունեության գլխավոր դաշտը ռազմահայրենասիրական դաստիարակության սուբյեկտների գործունեության ակտիվացման և արդյունավետության բարձրացման մեխանիզմների ստեղծումն է՝ նաևս և առաջ հաճապատասխան նախարարությունների, գերատեսչությունների, մարմինների, կազմակերպությունների: Այստեղ կարևոր է նաև հասարակական կազմակերպությունների գործունեության ուղղվածության փոփոխությունը ի շահ ռազմահայրենասիրական դաստիարակության: Առաջին հերթին դա վերաբերում է տարբեր տիպի երիտասարդական միավորումներին, որոնք մեծ չափով ընդունակ են նորարարությունների, նոր, ոչ ավանդական ձևերի, միջոցների, տեխնոլոգիաների որոնմանը՝ ներգրավելով նախազորակոչային տարիքի պատամիններին ռազմահայրենասիրական ուղղվածության միջոցառումներում:

### **Վերականգնան փուլերը.**

Ժամանակակից հասարակությանը, աշխարհում ընթացող գործնթացների տրամաբանությանը և մեր ազգային մշակույթին, ռազմաքաղաքական իրավիճակը պայմանավորված իրողություններին հաճապատասխան ռազմահայրենասիրական դաստիարակության համակարգի ձևավորումը բարդ և բազմափուլ գործընթաց է: Դրա իրականացումը հնարավոր է միայն գիտականորեն հիմնավորված և իրատեսական զարգացման ռազմավարական ծրագրի հիմնա վրա: Ռազմավարական ծրագրի իրականացումը (մինչև 2020 թվականը) պետք է ընդգրկի միմյանց հետ տրամաբանորեն կապակցված հետևյալ հիմնական փուլերը.

**1.Նախնական փուլ (2013-2014թ.):** Նպատակի հստակեցում, հաճապատասխան խնդիրների առաջադրում, ռազմավարության նշակման համար արտերկրի և հայրենական հաջողված փորձի ուսումնասիրում, մեր հասարակության և պետության առանձնահատկությունների հաշվառմանը դրական կողմերի առանձնացում և դրանց ներդրման արդյունավետության կանխատեսում, առկա և հնարավոր վտանգների գնահատում, բազմագործունային նախագծում, մեթոդաբանական հիմքերի մշակում, գիտական և տեղեկատվական բազայի ստեղծում, ռազմավարական ծրագրի իրականացման համար նպաստավոր իրավական դաշտի ապահովում, ծրագրի իրականացման սուբյեկտների, նրանց պարտականությունների, պատասխանատվության շրջանակների և յուրաքանչյուր խնդիր լուծման համար վերջնաժամկետների հստակեցում:

### **2.Ծրագրի անմիջական իրականացման փուլ (2015-2019թ.):**

Մշակված ռազմավարական ծրագրի նպատակին և յուրաքանչյուր խնդրին համապատասխան գործողությունների, միջոցառումների փուլ առ փուլ իրականացում, ընթացիկ նպատակների ձեռքբերմանն ուղղված այդ գործողությունների արդյունավետության գնահատում, առկա հիմնական և իրադրային խնդիրների լուծում:

**3.Ռազմավարական ծրագրի ստուգողական-փորձաքննական փուլ (2020թ.):** Ռազմավարական ծրագրով նախատեսված հիմնական նպատակի և ձեռքբերված արդյունքների համեմատական գնահատում, առկա հակասությունների վերհանում, առանձնացում, դրանց պատճառների վերհանում, հաղթահարման ուղիների, միջոցների մշակում և կիրառում: Արդյունքում հնարավոր կլինի ձևավորել ռազմահայրենասիրական դաստիարակության գործուն համակարգ, մշակել կատարելագործման և որակական զարգացման ծրագրեր, ներդնել նորարարական մեթոդներ, տեխնոլոգիաներ, գործուն մեխանիզմներ:

Ռազմահայրենասիրական դաստիարակության համակարգի ձևավորման և զարգացման ռազմավարական ծրագրերի նախագծումն ու իրականացումը, բազմագրուն և համալիր նպատակառուղղված համալիր ծրագրերի մշակումը, նորարարական մեթոդների, միջոցների ու տեխնոլոգիաների ներդրումը, նպաստավոր օրենսդրական դաշտի ձևավորումը և կոմպետենտ կարգային ապահովումը կնպաստեն ՀՀ-ում ռազմահայրենասիրական դաստիարակության գործուն համակարգի ստեղծմանը, դրված հիմնական նապատակների ձեռքբերմանը: Վերջին տարիներին մեր հասրակության մեջ զգալիորեն ակտիվացել են ռազմահայրենասիրական դաստիարակության ուղղությամբ գործունեություն իրականացնող հասարակական, պետական, կրոնական կազմակերպությունները, առանձին անհատները, գիտակրթական կենտրոնները: Սակայն պետք է փաստենք, որ նրանց գործունեությունը համակարգված և համալիր բնույթ չի կրում ոչ կառուցվածքային, ոչ բովանդակային կողմերով: Ռազմահայրենասիրական դաստիարակության հիմնախմբին ուղղված ծրագրերի, գործողությունների ծանրակշիռ հատվածի պատասխանատվությունը, նախաձեռնողականությունը վերցրել են ՀՀ Պաշտպանության և Կրթության ու գիտության նախարարությունների համապատասխան ստորաբաժանումները, Հայ առաքելական Եկեղեցին: Մասնավորապես ակտիվացել է ռազմահայրենասիրական դաստիարակության ուղղությամբ հանրակրթական դպրոցների և բուհերի աշխատանքները: Վերոնշյալ գերատեսչությունները համատեղ կազմում են ռազմահայրենասիրական դաստիարակության միջոցառումների պլան, ստորագրվում են նախարարների համատեղ հրամաններ: Այդ աշխատանքներում իրենց ներդրումն են ունենում նաև ՀՀ Մշակույթի և Սռողջապահության, Արտակարգ իրավիճակների նախարարությունները, Ոստիկանությունը:

Դեռահանմերի, պատասխմների, երիտասարդների մեծամասնությունը, այդ թվում նաև բավականին ապահով ընտանիքների, չեն կարողանում իրենց անհատական առանձնահատկություններին, անձի ուղղվածությանը՝ հետաքրքրություններին, պահանջնումներին, դիրքորոշումներին համա-

պատասխան տեղն ու դերը գտնել հասարակության մեջ, չեն կարողանում ինքնահրացվել, հաջող ինտերվի հասարակական հարաբերություններին: Դրա պատճառը սոցիալական և հոգևոր արժեքների, կողմնորոշումների, աշխարհայացքի, մտավոր կարողությունների, անհրաժեշտ գիտելիքների բացակայությունն է, կենսագործունեության տարրեր ոլորտներում արդյունավետ գործառնելու համար անհրաժեշտ սոցիալական հմտությունների բացակայությունն է կամ դրանց ոչ բավարար ծարգացվածությունը: Նշված խնդիրները անմիջականորեն բացասական կողմով ազդում են ռազմահայրենասիրական դաստիարակության բովանդակության, նրա իրականացման արդյունավետության վրա: Ուզմահայրենասիրական դաստիարակության կայուն համակարգի ձևավորումն ու զարգացման, կատարելագործման անընդհատության ապահովումը հնարավորություն կտա նրանում ընդգրկել պատանինների, երիտասարդների տարրեր խնդիրի, նույնիսկ ռիսկային համարվող խնդիրի, շոշափելի դարձնելով համակարգի արդյունավետությունը: Ավելին, ռազմահայրենասիրական դաստիարակության կայուն համակարգի առկայությունը կնպաստի նաև պատանինների, երիտասարդների հաջող սոցիալականացմանը, սոցիալական, հասարակական ակտիվության խթանմանը, քաղաքացիական հասարկության ձևավորման ու զարգացմանը: Մեր կարծիքով, ռազմահայրենասիրական դաստիարակության հիմնախնդրի լուծումն ու համապատասխան գործուն համակարգի ստեղծումը ենթադրում է կոնակտներ կառավարման մարմնի ստեղծում, կինի այս որպես հանձնաժողով, խորհուրդ, միջգերատեսչական կառույց, մարմին, որը կմշակի և ռազմավարությունը, և մեթոդաբանությունը, համապատասխան հայեցակարգերը և աշանձին ուղղությունների և մեխանիզմների մշակման, դրանց ներդրման ընթացակարգերը, այդ բնագավառում տեղեկատվական-վերլուծական, գիտական-մեթոդական: Այս օղակը պետք է ունենա որոշակի լիազորություններ, պարտականություններ, իրավունքներ. կարծում ենք, որ կարելի է քննարկել նաև այդ օղակի աշխատանքի շրջանակների, պատասխանատվության ոլորտի, ընթացիկ և հիմնական պլանների, նախագծերի և երկարաժամկետ ծրագրերի մշակման, դրանց իրականացման ղեկավարման ու վերահսկման խնդիրները: Ուզմահայրենասիրական դաստիարակության համակարգի ձևավորումն ու ակտիվ գործառնությունը կապահովեն ավագ դպրոցականների այնպիսի սոցիալապես կարևոր որակների ձևականացմանը, ինչպիսիք են բարձր պատասխանատվությունը, քաղաքացիական հասունությունը, հայրենիքի և ազգի նկատմամբ սերը, պարտքի զգացումը, ազգային ավանդույթների, մշակույթի նկատմամբ հետաքրքրությունը, ավելի կմեծանա գործունեության տարրեր ոլորտներում հասարակության կարևոր խնդիրների լուծման գործում նրանց ակտիվ մասնակցության հնարավորությունը: Երեխանների և դեռահասների վերոնշյալ որակական հատկանիշների ձևավորումը, բնականաբար, ուղղակիորեն կնպաստի հասարակական հարաբերությունների բովանդակության դրական փոփոխությանը, մարդասիրությանը, բարոյական, ազգային և համամարդկային բարձր արժեքների, դրանց նկատմանը դրական վերաբերմունքի ձևավորմանը:

Ամփոփելով, նշենք, որ ավագ դպրոցականների քաղաքացիության, հայրենասիրության, հայրենիքին պատվով ծառայելու պատրաստակամության զարգացման մանկավարժական հիմունքերի մշակման ժամանականիրաժեշտության գործադրության պայմաններում ներդնել հայկական և արտերկրի փորձը: Համակարգը պետք է նպատակառությամբ լինի ոչ միայն ընդհանուր երիտասարդությանը, այլ նաև յուրաքանչյուր առանձին պատանու, երիտասարդի՝ որպես քաղաքացու և հայրենասերի կայացմանը և զարգացմանը, ապահովի ռազմավարական ծրագրով նախագրված նպատակի ճեղքերմանը: Մեր համոզմամբ, միայն համարի միջոցառումների և գործուն համակարգի առկայության դեպքում հնարավոր կլինի լուծել ռազմահայրենասիրական դաստիարակության խնդիրները:

Ռազմահայրենասիրական դաստիարակության տեսության մեր կողմից իրականացրած հետազոտությունները մեզ թույլ տվեցին հանգել հետևյալ եզրակացությունների:

1. Նախազորակոչային պատրաստության (ՆԶՊ) ուսուցիչներին մանկավարժակության գիտելիքներ հաղորդելը, կարողությունների ու հմտությունների ձևավորումը բարձրացրեց դպրոցում ռազմահայրենասիրական դաստիարակության գործընթացի արդյունավետությունը, քանի որ միայն ռազմագիտական գիտելիքներին տիրապետելը չի ապահովում ցանկալի արդյունք:
2. Ավագ դպրոցականների մոտ բանակում ծառայությանը պատրաստ չկանոնավոր ազդում է գորակոչվելուց հետո գինված ուժեղի ստորաբաժնումներում նրանց ծառայության որակի վրա (հարցման ենթարկված ավագ դպրոցականների շուրջ 30%-ը իրենց պատրաստ չեն համարում բանակում ծառայելու համար, իսկ 68%-ը գտնում է, որ որոշ չափով է պատրաստ):
3. «Հ երիտասարդ սերնդի հայրենասիրական դաստիարակության կազմակերպման ու իրականացման հայցակարգի ստեղծումը և գործնականում ներդրումը անմիջականորեն պայմանավորում է գինվորական ծառայությանը՝ նախազորակոչային տարիքի պատանիների պատրաստության մակարդակի բարձրացումը:
4. «Հետազոտությունների արդյունքները վկայում են, որ հանրակրթական դպրոցներում ռազմահայրենասիրական դաստիարակության խնդիրների շարքում անտեսվում է իրավագիտակցության ձևավորումը, ինչը հետազոյում անմիջականորեն հանգեցնում է գինվորական ծառայության ընթացքում իրավախախտումների դրսևորումներին: Աշակերտները ծանոթ չեն աշխատավորական մասին «Հ օրենքին, Ռազմական դրվագներին, Ազգային անվտանգության հայեցակարգի հիմնական դրույթներին»:
5. Ժամանակակից ավագ դպրոցում ռազմահայրենասիրական դաստիարակության գործընթացի արդյունավետ գործառնությունը հնարավոր է ամբողջական մանկավարժական գործընթացում:
6. Հանրակրթական դպրոցներում ռազմահայրենասիրական դաստարակության խնդիրների արդյունավետ լուծման համար

անհրաժեշտ է հստակեցնել բոլոր սուբյեկտների պարտականություններն ու գործառույթներն այդ ուղղությամբ և մշակել այդ աշխատանքի որակի գնահատման չափանիշներ ու նեխանիզմներ:

Աստեղային հիմնական արդյունքները արատցոված են հեղինակի կեղմից **հրատարակված հետևյալ հոդվածներում**.

1. Վ. Ա. Մուրադյան «Ուազմահայրենասիրական դաստիարակության իրականացման հիմնական ուղղությունները հանրակրթական դպրոցում», Հանրապետական գիտական նստաշրջանի նյութեր: Նվիրվում է ՀՀ անկախության հրչակագրի ընդունման 20-ամյակին, ԳՊՄԻ, 13-14 դեկտեմբերի, 2010թ., էջ 403-406:
2. Վ. Ա. Մուրադյան «Ուազմահայրենասիրական դաստիարակության համակարգը հանրակրթական դպրոցում», Հանրապետական գիտական նստաշրջանի նյութեր: Նվիրվում է ՀՀ Անկախության ընդունման 20-ամյակին, ԳՊՄԻ, 28-29 նոյեմբերի, 2011թ., էջ 416-419
3. Վ. Ա. Մուրադյան «ՀՀ քաղաքացիների ռազմահայրենասիրական դաստիարակության հայեցակարգի ստեղծման անհրաժեշտությունը», «Մխիթար Գոշ» գիտամեթոդական հանդես, 4-6(37), Վանաձոր, 2013թ., էջ 99-101:
4. Վ. Ա. Մուրադյան «Նախագրորակոչային տարիքի պատանիների ռազմահայրենասիրական դաստիարակության կատարելագործման ուղիներն ու միջոցները», «Модернизация образования в контексте современных педагогических парадигм», сборник научно-образовательных докладов и статей, Ереван, АГПУ, 2014, стр. 248-252:
5. Վ. Ա. Մուրադյան «Ավագ դպրոցականների ռազմահայրենասիրական դաստիարակության ծրագիր», «Մխիթար Գոշ» ուսունանեթոդական հոդվածների ժողովածու, Վանաձոր, 2014, 1(40), էջ 157-160:

## **МУРАДЯН ВАРДАН АШТОВИЧ**

### **ПУТИ И СРЕДСТВА СОВЕРШЕНСТВОВАНИЯ ВОЕННО-ПАТРИОТИЧЕСКОГО ВОСПИТАНИЯ УЧАЩИХСЯ**

Диссертация на соискание ученой степени кандидата педагогических наук по специальности 13. 00. 01. «Теория и история педагогики».

Защита состоится 23-го октября 2014г. в 12<sup>00</sup> ч. на заседании специализированного совета педагогики 020 ВАК по присуждению ученой степени при Армянском государственном педагогическом университете им. Х. Абовяна по адресу: 0010, Ереван, Тигран Мец 17:

#### **РЕЗЮМЕ**

**Актуальность исследования.** Современное восприятие патриотизма характеризуется неоднородностью. Во многих случаях это объясняется сложностью самого понятия, разносторонностью содержания и множеством способов их выражения. Это обусловлено прежде всего военно-политической ситуацией, геополитическим фактором, отношениями Армении с Турцией и Азербайджаном, рыночными отношениями.

Существуют разногласия в понятиях истинного патриота и в формировании гражданской личности гражданина в государственных заказах и в способах обучения и воспитания патриотизма в школе. Эти разногласия проявляются также в процессе целенаправленного патриотического воспитания между объективной необходимостью патриотического воспитания и отсутствием соответствующих педагогических условий.

**Цель исследования:** разработать и теоретически обосновать комплекс направлений и средств совершенствования процесса военно-патриотического воспитания учащихся в старшей школе.

**Объектом исследования** является процесс военно-патриотического воспитания в современной старшей школе.

**Научная новизна исследования** заключается в следующем:

- Представлена целостная учебно-методическая система военно-патриотического воспитания, выявлены особенности этой системы и отдельных моделей данной системы в современной школе.

- Разработаны и подтверждены способы и пути совершенствования патриотического воспитания в современной школе.

- Экспериментально подтвержден предложенный нами комплекс функционирования педагогических путей и средств совершенствования процесса военно-патриотического воспитания в современной школе.

**Теоретическая значимость исследования** обусловлена обогащением педагогической науки научно-теоретическими исследованиями в разработке современной проблемы патриотического, военно-патриотического воспитания школьников; выявлением особенностей военно-патриотического воспитания школьников в условиях современных образовательных реформ и научно-теоретическим обоснованием путей и средств совершенствования этого процесса.

**Практическая значимость исследования** заключается в том, что разработанная нами программа о военно-патриотическому воспитанию и начальной военной подготовке учащихся и методические рекомендации будут способствовать совершенствованию процесса военно-патриотического воспитания в современной школе, выявлению недостатков в этой сфере, в разработке педагогических мер для их преодоления. Более того, проделанная нами исследовательская работа, полученные результаты, методические выводы и предложения будут способствовать повышению уровня начальной военной подготовки юношей призывного возраста.

#### **Структура диссертации**

Диссертация состоит из введения, двух глав, заключения, библиографии, списка использованной литературы и приложений.

## MURADYAN VARDAN

### THE WAYS AND MEANS OF MASTERING PUPILS' MILITARY AND PATRIOTIC EDUCATION

Thesis for the degree of candidate of pedagogical sciences, specialty 13.00.01. - "The theory and history of pedagogy".

The defense of the thesis will be held at 12<sup>00</sup> on October 23, 2014 at the session of the Special Board 020 HAC (Higher Attestation Commission) to award degrees under the Yerevan State Pedagogical University after Kh. Abovyan, address: 0010, Yerevan, Tigran Mets str. 17.

#### SUMMARY

**The relevance of the research.** Modern perception of patriotism is characterized by multi-facetedness and divergence. The latter is due to its complex character and the variety of the means of expression. It is also preconditioned by the military and political situation in Armenia as well as its geopolitical position, by the nature of relations with Azerbaijan and Turkey, including the trade relations.

There is a discrepancy between the state order of patriot and citizen formation and the possibility of making a civic stance under the conditions provided by school education, between the objective necessity for providing full patriotic education of pupils in High Schools and lack of relevant pedagogical conditions for its realization in life.

**The goal of the research** is to work out and theoretically justify the system of mastering military and patriotic education ways and means at High Schools.

**The object of study** is the military and patriotic education process at modern High Schools.

**The novelty of the research** consists in:

- presenting the integral system of military and patriotic education and disclosing the applicability of this system and its separate models at modern schools;

- working out the pedagogical ways and means of mastering military and patriotic education process approbated by a scientific experiment;

- proving the applicability of the system of pedagogical ways and means put forward in the present paper by way of an experiment at modern schools.

**The theoretical significance of the research** is determined by the enrichment of theoretical and scientific studies on the modern problems of pupils' patriotic and military education, the revelation of the peculiarities of military and patriotic education in the process of modern educational reforms and the theoretical and scientific justification for the process refinement.

**The practical value of the research** lies in working out the pupils' patriotic and military education and the pre-call-up age training program. The methodological propositions will contribute to the process of military and patriotic education at modern schools as well as to the disclosure of targets in the sphere under discussion, and to the elaboration of pedagogical ways of overcoming them.

Additionally, the present research, its results and its methodological conclusions and propositions will make a contribution in the training of pre-call-up age pupils and their future military service.

#### **Structure of the dissertation**

The present dissertation consist of an introduction, two chapters, conclusion and references.

A handwritten signature in blue ink, likely belonging to the author or researcher, is placed here.